


Чирбук Сандан

1929

491.99-8
4-33



1005-10

ՔԱՂԱԿԱՆ ԼՈՒՍՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

91. 5/2-8

4735

Թուրքական և Պեղպատության գիտական-հազարա-
կան սնկաբայի կողմից հասակավորման գրադիտուր.
Հայրացների համար.

ԿԱՐՄԻՐ ՄԱՃԿԱԼ



ՀԱՍԱԿԱՎՈՐՆԵՐԻ ԱՅԲԵՆԱՐԱՆ

Հ. Ռ. Ս. Ե. Ց. Ե. Կ.

ԱՎՐԵԼԱՐԱՆ ՄԱՍԻ
Մ. Դատավայան, Լ. Խուզօրան

ԵՎՐԵԹԱՐԱՆ
Հ. Հայուրյան, Մ. Դ.

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԻԳ. 1920

Թ 03 39. 05

431-39-8

4-33

ԿԱՐՄԻՐ = = ՄԱՃԿԱԼ

ՀԱՍՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՅԲԵՆԱՐԱՆ




ՊԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ


ԵՎՐԵՎԱՆ - 1929

20.05.2013


8575




28829-60



կ ա ր ի




շ ա ն ի




զարի *gauñi*

gauñi զարի

gauñi զարի



Գարի



Ցորեն


զարի *nL gnp̄eñ*

gnp̄eñ *nL* զարի

gauñi *gnp̄eñ* *gauñi*

gauñi զարի *gauñi*

nL nL h h



Վանի, շուտ վար արա

Վանին ցորեն ունի:


Վանին գարի ունի:

Վանին ցորեն ու գարի՝ ունի:

Վանի, շուտ վար արա:

Ցորեն ու գարի ցանի:

Աս իհ Ու ու



Նանի, շուտ արի

Արի, Արա, շուտ արի:

Շուտ արի ու վար արա:

Արի, Ունան, շուտ արի:

Ցանի ցորեն ու գարի:

Ըր Նև

Երա



Նանին մանում ե

Նանին մանում ե:

Մարս, շնւտ մանի:

Գարս, արի մանի:

Մանան, շատ մանի:

Արա, արի տակ:

Ե և Բ բ

Իրաւ արի

1, 2, 3, 4, 5.

Մարոն կար ե անում

Մարոն շոր ե կարում:

Նա շատ ուշ ե կարում:

Մարոն, շոր շուտ կարի:


Շոր կարի, Ունանին տնկր:

Կարոն ու Գարոն շոր ունին:

Ե և Ո ո

Իրի, կար արա

1, 2, 3, 4, 5.



Սարի մեքենա

Նարոն մի մեքենա ունիք
Նա շատ շուտ է կարում:
Մարոն ուշ է կարում:
Նարոն կարում է 1 որում:
Մարոն կարում է 4 որում:


Ո ն Ե ե

Մեքենան կարու՞ է 1 որու՞:

Մարոն կարու՞ է 4 որու՞:

6, 7, 8, 9.

6, 7, 8, 9.



Սարի տակ արոտ կա


Սարոն մի սիրուն կով ունի, մի շատ սիրուն կով—
Սրամ, Սարոն ու Սրան կովին արոտ տա-
րան: Մեր կովին արոտ տար: Սարի տակ արոտ կա:

ԳԱՐԱՌՆ ԿԱՐՈՏ

Արի, գարուն,
սիրուն գարուն.
գարնան որեր,
սիրուն որեր:

Մ ա Վ զ

Թիրի, գարուն, սիրուն գարուն.
գարնան որեր, սիրուն որեր:



Բամբակ

Բանվոր


Շարքացան

ՇինԱԿԱՆ ՈՒ ԲԱՆՎՈՐ

Բամբակ ունես, տնւր բանվորին,
վոր սիրուն շոր տա:
Յորեն ունես, տնւր բանվորին,
վոր շարքացան մեքենա տա:
Բամբակ շատ ցանի, շարքացան արա:
Շինական, բանվորին բամբակ տնւր:
Բանվոր, շինականին մեքենա տնւր:

Ս ս

Եինական, բանվորին բամբակ
տնւր: Բանվոր, շինականին
մեքենա տնւր:




Դանակ



Կացին



Դարբին



Գերանդի

Ուրագ

Դանակ

Կացին

ԴԱՐԲԻՆ ԱՐԱՆ

Դարբին Արան շատ ե բանում. նա շինում ե դանակ,
գերանդի, կացին, ուրագ ու շատ ուրիշ բաներ:

Շ և Գ զ

Խրան դարբին ե: Նա շինու
ե ուրագ ու կացին:



Բանվորը ու բատրակը դաս են սովորում։


ԿԱՐԴԱՌ

Կարդա, բատրակ ու բանվոր,
Կարդա, գըրի ամեն որ.
Գըրել-կարդալ սովորի, շինական,
Վոր իմանաս ամեն բան։

Գ գ Շ շ

Բանվորը դաս է սովորում։
Բայրակը նախակ է կարդում։

21, 22, 23... 31, 32, 33... 41, 42, 43... 49




ԼԵՆԻՆ

Ընկեր Լենինը ասում է՝
բանվոր, սովորի,
բատրակ, սովորի։
Ընկեր, լրակ Լենինին՝
սովորի, սովորի, սովորի։
Ուսումը լավ բան է. կարդա, գըրի, ամեն որ սովորի։

Հ ը Լ լ

Լենինը ասու՞մ է.
Պւսու՞մը լավ բան է.
Սովորի, սովորի, սովորի։

50, 51, 52... 60, 61, 62... 70, 71, 72... 79




ԿՈՌԵՐԱՍԻՎ

Պետրոսը ու Կարապետը արտելի կարագը ու պանիրը տարան շուկա։ Մասնավորը մի կիլո պանրին տալիս եր 80 կոպեկ, իսկ մի կիլո կարագին՝ 2 մանեթ 20 կոպեկ։ Նրանք գընացին կոռպերատիվ։ Կոռպերատիվը մի կիլո կարագին տվեց 2 մանեթուկես, իսկ մի կիլո պանրին՝ 90 կոպեկ։ Պետրոսը ու Կարապետը կոռպերատիվից գընեցին շաքար, սապոն, դանակ, կացին ու շատ ուրիշ բաներ։

Ք թ

Մասնավորի մոր շաքարի կիլոն 75 կոպեկ է, իսկ կոռպերատիվութ՝ 71 կոպեկ։

80, 81, 82... 90, 91, 92... 99



ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՏԵՔՍՏԻԼ ԳՈՐԾԱՐԱՆԸ

Լենինականի տեքստիլ գործարանը շատ նոր մեքենաներ ունի։ Գործարանում շատ բանվորներ ու վարպետներ են բանում։ Բանվորները բամբակից գործում են կրտափ, գուլպա ու շատ ուրիշ բաներ։ Գործարանը կապ ունի կոռպերատիվների հետ։ Գործած կրտափը տալիս են կոռպերատիվին։ Գործարանին կից ուսումնարան կա, վորը պատրաստում ե վարպետներ։

Պ պ

Լենինականի տեքստիլ գործարանը շաբ նոր մեքենաներ ունի։



ՄԸՆՈՒԻՐ

Հենինականի տեքստիլ գործարանում շատ կեն բանվորներ կան: Գործարանը մըսուր ունի: Կին բանվորները ամեն որ իրենց մանուկներին տանում են մըսուր ու ապա գնում գործարան: Մանուկները ցերեկը մնում են մըսուրում, իսկ իրիկունը իրենց տանը: Մսուրում ամեն բան լավ ե—ողը մաքուր ե, կերակուրը՝ լավ:

S u Ծ

Լենինականի յութիստիլ գործարանու լավ նուր կա:



Հ 8 8 2 9 - 6 0

119

Հովիվը դաշտում գիրք ե կարդում


ՀՈՎԻՎ ՀՐԱՆԴԻ

Գարուն եր: Բատրակ Հրանդը անգործ եր: Նա զընաց բատրակկոմ ու պատմեց իր ցավը: Հրանդի հարցը դըրեցին բատրակկոմի նիստին: Նրան հըրավիրեցին հովիվ: Հրանդը դաշտում հոտին եր հետեւում ու կարդում: Նա իր դասերը միշտ սովորում եր:

Դդ

Ինչիվը դաշտու՞ հերեվու՞ և
հոդին ու միշտ սովորու՞ է:





Արտելը
խոտ ե հարում


Շինականը
խոտ ե հարում

ԽՈՏՀԱՐ ՄԵՔԵՆԱՆ ՈՒ ԳԵՐԱՆԴԻՆ

Արտելը խոտհար մեքենա ունի։ Արտելը խոտը շատ շուտ ե հարում։ Հակոբը գերանդի ունի։ Նա մենակ շատ ուշ ե հարում։ Գերանդին հինգ հեկտար խոտը հարում ե հինգ որում, իսկ խոտհար մեքենան՝ մի որում։

Հ

Արդեյք խորհար մեքենա ունի։
Խորհար մեքենան շուրջ ե հարում։




ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ԳԵՂԲ

Կանգնի՞ հաստատ, շինական,
գեղի տեր ու տիրական.
Երեկ աղեն եր տերը՝
աղեն ու իր տերտերը.
տերն ես հիմա ամենի,
գնա հանգիստ աշխատի։

Դ

Դի աշխատի՝ նա ուրի։
Գեղ կանգնի՝ գերան կերպի։



ԱՐՏԵԼԻ ՎՈՉԽԱՐՆԵՐԸ

Ես տարի արտելի խոտը շատ եր: Վորոշեցին վոչխար ունենալ:

Վոչխարը շատ ոգուտ կտա: Հիմա բուրդը լավ գին ունի:
Ընկեր Խաչիկին Բորչալու ուղարկեցին վոչխար գնելու:
Տամն ու չորս որից հետո Խաչիկը քսանչորս վոչխար բերեց:


Ո՞վ ե պահելու վոչխարները: Նրանց լավ պետք ե խընամել:

Իհարկե՝ բատրակ Գեղամը. վոչխար պահելը հեշտ բան չի. նրանք շուտ են հիվանդանում:

Բատրակ Գեղամը լավ կպահի. նա վոչխար շատ ե պահել:

Գեղամին հովիվ կանչեցին ու արտելի անդամ գրեցին:

Մեր արդեյք քասնզորս լավ վոչխար գնեց:
Հովիվ կանչեցին բատրակ Գեղամին:
Գեղամը վոչխարներ լավ եր պահու:



Խ Ռ Զ

Խոզն իր ամուռ ատամներով ամեն ինչ ծամում, ուռում ե. արմատ, խոտ, հաց, միս, կաղին:

Սառում են, վոր խոզը շատակեր ե, կեղտոտ ե: Վնչ, դասիալ ե: Ճիշտ ե՝ նա սիրում ե ուտել. ինչու չուտի:

Մի որ մենք գնացինք պետական խոզաբուծարան:


Ի՞նչ տեսանք. խոշոր մաքուր խոզեր:

— Խոզը մաքրասեր ե, — ասաց խոզաբուծարանի վարիչ Զավենը: — Ի՞նչ անի նա, վոր չի կարողանում վիզը ծռել, վորպեսզի դնչով մարմինը բորի, մաքրի: Դրանից ե, վոր նա քսվում ե պատերին: Դուք սիրում եք լողանալ, իսկ նա ցեխն ե մտնում: Պետք ե խոզ պահել, լավ ու մաքուր պահել:

Վորոշեցինք հարց դնել մեր արտելում, վոր խոզ գնի:

Խ Խ Զ Հ

Չափենք լավ խոզեր ե պահու: Նրանց
լավ կերակրու: Եւ ու չափուր պահու:



ԺՈՂՈՎ

Դպրոցում կանանց ժողով եր: Քաղաքից յեկած մի կին խոռոշ եր կանանց մասին:

— Լավ ժամանակի հասանք, — գլուխը շարժելով ասում եր Ոհանը: — Կինն ի՞նչ, ժողովն ի՞նչ:

— Ոհան ապեր, աշխարհը լուսավորվել ե, — ասաց կոմսոմոլիստ Ժորժիկը: — Ի՞նչ զիտես, վոր զինն ել ժողով չի գնացել:

— Իմ կինը խելոք ե, դժվար գնա: Ասենք, աշխարհ ե, ով զիտի, — ասաց Ոհանը և գնաց դեպի տուն:

Տանը մարդ չկար: Մի բիչ հետո ներս մտավ Մարանը՝ նրա կինը:

— Մարդ, ժողով գնացի, լավ-լավ բաներ ասացին:
— Ա՛ կնիկ, ի՞նչ կարող ես հասկանալ եղ ժողովսերից: Ի՞նչ քո խելքի բանն ե:

— Շատ լավ հասկացա: մինչև հիմա չեմ գնացել, չեմ հասկացել: Են ել հասկացա, վոր կինը մինչև հիմա լեզու չի ունեցել, հիմա կինը ազատ ե, նա պետք ե գրագետ լինի: Զեմ հիշում. շատ լավ բաներ ասաց. հա-հա, հիշեցի, վոր մարդ ու կին հավասար են: Մարդն իրավունք չունի բարկանալու: Մեկ ել՝ վոր կինը իրավունք ունի նախագահ լինելու:

— Ի՞նչ նախագահ կինես, — վրա բերեց Ոհանը ծիծաղելով:

— Ի՞նչու Սուրենի կինը, Ոսանը չի կարող նախագահ լինել. կոռպերատիվում պակաս ե աշխատում. թող կարդալ սովորեմ, են ժամանակ...

— Են ժամանակ... հենց եղ եր պակաս. բա մեր տունը: Մարոն աղա, Կարոն աղա. բա մեր աղունը ով աղա:
— Վոչինչ ել չի լինի. աղունն Ոհանն ու Մարանը կաղան. վոչ Ոհանն աղա, վոչ Մարանը: — Ծիծաղեց Մարանը:
Մի քանի որից հետո Մարանը գնում եր սովորելու:

Կինն ապար չեր: Իինձ նա ապար է: Նա գնում է Ժողովի, իրավունք ունի ընդրելու, ընդրվելու: Նու հայաստ իրավունքներ ունի:



Արոռ

Գութան

Տըրակտոր

ՄԵՐ ԿՈՄՄՈՒՆԱՆ

Գարուն եր: Մոտենում եր ցանքի լավ ժամանակը:
— Վարելու ժամանակը ուստինում ե. վոչ գութան ունենք, վոչ արոր: Ի՞նչպես ցանք անենք: — Հարցը եղած զրեց չքավորական ժողովում կոմմունիստ Հարութը:

— Ի՞նչ պետք ե անենք. հողը կտանք հարուստներին կիսովի ցանելու, — ասազ ժամկոչենց թաթոսը:

— Զե՛, զրանից բան զուրս չի գա. ավելի լավ ե հավաքվել ու միացած ուժով մի գութան բերել տալ:

— Միացած ուժով վոչ թե գութան, տրակտոր կարելի կլինի բերել, — վրա բերեց Հարութը: — Հարկավոր ե, վոր մենք միանանք: Ինչու սամաղարցիք կարող են միանալ ու կամունա կազմել, տրակտոր բերել տալ, իսկ մենք վոչ:

— Մենք ել ենք ցանկանում կամունա կազմել, — լսկեց ամեն կողմից:

Ժողովում վորոշեցին կոմմունա կազմել:

4 որից հետո Հարութը քաղաքից բերեց հաստատված վորումը:

— Շուտով մեզ տրակտոր ու խոտհար մեքենա կուղարկեն, — ուշախ-ուրախ ասաց նա:

Ժ Ճ Զ գ

Թե ուզում ես թերք ունենայ,
հողի բող վարի մեժենան.
Կուլակներից ապաց մնայ,
գնա գրվի կոմնունա:



ԱՅգեկռիթ

— Այ տղա, Պարուցր, վաղն այգին քաղում ենք, — ասաց Վորուցրն իր վորդուն: — Գնա այգեգործական արտելին իմաց տուր, վոր խաղողն ընդունեն:

Պարույրն իսկույն վազեց իմաց տարու:

— Ընկեր Հայրապետ, — ասաց նա արտելի նախագահին, — հայրիկս ասաց, վոր վաղը մեր խաղողն ընդունեք:

— Լավ, — պատասխանեց արտելի նախագահ Հայրապետը:
Լուսը չեր բացվել, վոր Վորույրը զարթեցրեց բոլորին:


Պարույրը, իր մայրն ու քույրը շուտով վեր կացան, թել խմեցին, նստեցին սայլը և գնացին այգի:

Մինչև արևի մալը մանելը խաղող քաղեցին:

Ցերք պրծան, քաղած խաղողը քթոցներով դրին սալին ու քշեցին դեպի այգեգործական արտելի պահեստը:

Ց ց

Մյօքիդ լայ մշակիր, վոր լայ թերք դա:
Թե արդեյի անդամ չես, անդամ գրիյր:



ԳՅՈՒՂԻ ՅԵՎ ՔԱՂԱՔԻ ԿԱՊԸ

Բանվորն ապրում ե քաղաքում և աշխատում ե գործարանում: Այստեղ նա արտադրում ե զանազան գործիքներ, մեքենաներ և ապրանք՝ շաքար, թեյ, սապոն և այլն:

Գյուղացին ապրում ե գյուղում և պարապում ե գյուղատնտեսությամբ: Նա արտադրում ե զանազան մթերքներ՝ ցորեն, ալյուր, գարի և ուրիշ շատ բաներ:



Գյուղացին իր արտադրած մթերքները տալիս ե քաղաքին և դրա տեղ ստանում կտորեղեն, շաքար, աղ, լուցկի, սապոն, զանազան գործիքներ, գիրք, լրագիր և ուրիշ ապրանքներ:

Քաղաքի և գյուղի կապը պիտի պահպանի կոռպերացիան:

Յեղայրներ ենք մենք են գլխից—
Յես բանվոր, դու գյուղացի.
Մեր սերտ, ամուռ միությունից
Հին աշխարհը թող սարսի:

Տաքարն ունի յոր որ՝ յերկուշաբթի, յերեխաբթի, չորեխաբթի, հինգշաբթի, ուրբար, շաբար, կիրակի:

1	2	3	4	5	6	7
Մեկ, յերկու,	յերեք,	չորս, հինգ,	վեց,	յոթ		



Կաղամբ

Բանջարանոց

Բողկ

ԲԱՆՋԱՐԱՆՈՑ

Բանջարանոցից մենք ստանում ենք կաղամբ, տակ, բողկ, յորի և ուրիշ բանջարներ: Բանջարները շատ մնունդ ունեն: Կաղամբն ամենալավ բանջարներից մեկն ե: Նրա մեջ կածձումբ, փորը մեր մարմնին հարկավոր ե:

Տակն ոգտակար բանջար ե: Նրա մեջ շատ շաքար կա: Այդպես ել ոգտակար են մնացած մյուս բանջարները: Բանջարները ոգտակար են և համեղացնում են կերակուրը:


Կ Կ Բ Բ

ԶԱԼԱԼՆ ՈՒ ԶՈՐԻՆ

Զվալը լիքը ցորեն
Զալալը դրեց ջորուն,
Գնաց ջաղաց, մանր աղաց:

Բանզարանոցի հողը պարարտացրու յեմ
նոր ցանիք:

Բանզարները շատ անունդ ունեն:



ԽՐՃԻԹ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Ուշ աշուն եր: Դաշտային աշխատանքները վերջացել ելին: Յերեկոները գյուղի յերիտասարդները հավաքվում եյին խրճիթ-ընթերցարանը:

Կոմսոմոլիստ Յերեմը յերեխաներին հավաքում եր և յերգեր եր սովորեցնում: Կորյունը մոծերի համար լրագիր եր կարգում:

— Ի՞նչ են գրում պատերազմի մասին,— հարցնում են նրան տղաները և աղջիկները:

— Սովորեցրեք՝ ինչ պետք ե մենք անենք պատերազմի ժամանակ,— ասում են միւտմերը:

— Ընկերներ, մեջնում Պաջը-Ավիաքիմի բջիջ կա: Պաջը-Ավիաքիմը յերկրի պաշտպանության գործին ե հետևում: Պետք ե անդամ գրվել:

— Ուզում ենք գրվել, — ամեն կողմից ասացին տղա ու աղ-

Ջիկ:

— Արդ ժամանակ մենք ժողով կնշանակենք ու հարց կդնենք

նոր ցանկացողների մասին:

— Լավ-լավ, — ուրախ-ուրախ գոչեցին ամեն կողմից:

— Ընկերներ, բացի Պաջը-Ավիաքիմը, մեր խրճիթն ունի այլ անկյուններ. ինչու չեք մասնակցում այդ անկյունների աշխատանքներին, — ասաց խրճիթվար Տաճառը: — Մեզանում կա նաև անաստվածների խմբակ:

— Վա՛յ, ինչ լավ յեղավ, յես անաստված եմ, — ասում ե մի աշակերտ, — անդամ կգրվեմ:


— Յես ել, յես ել, — լսվում եր ամեն կողմից:

— Լսեք... Տաճառը «Մաճկալ» ե կարդում ի՞նչպես ցանել և խնամել ճակնդեղը:

Թթ Յ

Մեր իր ջիր-ընթերցարանն սրանուժ է
«Մաճկայ», «Խորիրդային հայաստան», «Իհ-
վանգարդ», «Բանվոր», «Լինասրիած», «Կոմու-
նիստ» թերթերը:

Խրճիթները գյուղի կենտրոն,
ժամերի տեղ քեմ, թատրոն.
թերթեր, դպրոց, լիկայան,
դեղ ու բժիշկ գյուղ յեկան:



Ո-ՍԴԻՈ

Համամլվի խրճիթ-ընթերցարանում ուղիո գրեցին: Մի ամբողջ որ աշխատում ելին զբա վրա:

— Դատարկ բան ե, — ասում եր Ռուբենը. — ով ե տեսել, վոր առանց թելի հեռագիր լինի:

— Զե, քեռի Ռուբեն, մեր Ռուզանը յերեկ ամբողջ որը այն-
տեղ եր: Ասում եր, վոր յերեկոյան նույնիսկ անթել հեռագրով
Յերևանից խոսեցին: Այնքան եր ուրախացել, վոր խոստացա այ-
սոր գնալ խրճիթ ու լսել:

— Յերբ ե լինելու, չի լինի վոր յես ել գամ:

— Այ քեզ բան... ինչու չե:

Ժամը 12-ին խրճիթ-ընթերցարանը լիքն եր մարդկանցով:
Գյուղի պառավերն ել եյին յեկել:

Սեղանի վրա դրված եր ուղիոն:


Բոլորն ապշել ելին, յերբ պարզ լսվեց Յերևանից խոսող բժշկի
ձառը քութեշի մասին:

Պառավ Զավոն գլուխը մոտեցրել եր ուղիո-ապարատին, կար-
ծես թե ուզում եր խոսողին տեսնել: Յերեք ժամ ուղիոն խոսում
ու յերգում եր:

— Այ քեզ սովետական իշխանություն. — գլուխները շարժում
եյին ծերերը:

Յ Ճ Ճ

Պարիս արխաներ՝ հունվարը, փետրվար,
մարտ, ապրիլ, մայիս, հունիս, հուլիս, ոգոս-
յուն, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր, դեկ-
տեմբեր:



ՓՈԱՍՏ-ՀԵՌԱԳՐԱՏՈՒՆ

Փանոսի յեղբայրը ծառայում էր կարմիր բանակում: Նա նաև ավետք ե գրեր յեղբորը, բայց գրել-կարդալ չգիտեր: Մրան դիմեց, նրան դիմեց, մեկը ժամանակ չուներ. մլուսը տանը չեր: Մի շաբաթից հետո միայն մի աշակերտ գրեց Փանոսի նամակը: Փանոսը նամակը փակեց ծրարում ու Փարբուց Աշտարակ գնաց:

Փոստում նամականիշ գնեց, փակցրեց ծրարին ու մեկնեց վարիչին:

- Ընկեր, զցիր փոստ-արկղը.—ասաց գարիչը. բայց նկատելով վոր հասցեն չեր գրված, ասաց.

- Հասցեն գրիր:

- Գրել չգիտեմ,—ասավ Փանոսը:

- Ասա յես գրեմ:

- Յե, ևան:

- Հետո:

- Կարմիր բանակում ե ծառայում.—ասաց Փանոսը:

- Վոր գնդում, վոր վաշտում:

- Չեմ հիշում. նրա նամակը հետո չի:

- Առ, գնա գրիող, հասցեն գրի, նոր ուղարկի:

Փանոսը շատ եր բարկացած. ճամպին մտածելով գնում եր վորոշեց, ինչպես լինի գրագիտություն սովորի:

Զորս ամիս հաճախեց լիկ-կայան: Նա արդեն նամակները ինքն եր գրում:

Փ Կ Ո Ւ Թ Ո

Փոստ-հեռագրայրանոց կարելի յէ բաժանորդ գրիթի բոյոր լրագրերին՝ «Մաժկալ», «Հուրիքրդային հայագրան», «Պազմիկ», «Խիվանգարդ», «Այրարանի», «Բանվոր» յէվ այլն:



Զ Մ Ե Ր

Զմեռ եր:

Զյունը յեկել. կիտվել եր փողոցներում: Գետի ջուրը սառել եր: Գյուղացիք աշխատանքից թեթևացել ու ամեն գիշեր հավաքվում եյին սրանրա ողան զրույց անելու:

— Ախպէր, — շարունակեց Թաթոս բիձան, — ես նոր անունները չեմ կարողանում միտս պահել—յուղխորհուրդ, գրախտ, կամիտե, կոնցոմոլ...

— Արևին մեռնեմ եղ անունները գնողին, — ձայն տվեց ձկնորս Զավադը չիբուխը բերնից հանելով, — եղ անուններն ազատեցին մեզ պրիստավի մտրակից ու բըխվի ճիպոտից: Զիու պես աշխատում եյինք, դառը գատում, գատարկ նստում:

— Ել ասում ես ու թողնում. հագիվ մարդու շարք ընկանք, թե չե առաջ տավարը մեզնից լավ եր:

Այդ ժամանակ ներս մտավ Թաթոս բիձու տղա կոմսոմոլ Փանին և ծիծաղելով ասաց.

— Այ պառավիներ, ելի ձեր հին փեշակն եր բանեցնում. քանի անգամ եմ ասել՝ յեկեք խրճիթ-ընթերցարան. համ մաքուր, համ տաք, համ ել գիրք ու գաղեթ կկարդան ձեզ համար:

— Լավ ես ասում, յես ու իմ հոգին, — վրա բերեց Թաթոս բիձան, — սավետի համար գժոխք ել կերթամ:


Այսուհետև ծերունիներն սկսեցին հաճախել խրճիթ-ընթերցարան:

Ո Ւ Թ Ձ Հ

ԶՄԵՌ

Գեղն և սառել,
շենն և մարել,
յուրդ չնեռ ե,
չյուն չնեռ:

Չյուն և գալիս,
խամին լալիս,
յուրդ չնեռ ե,
չյուն չնեռ:



ՖՈՒՐԳՈՆ

ԲԱՏՐԱԿ ՍԱՅԱՐԸ

Փոքր հասակից Սաֆարն աշխատում եր Ֆրիդոնի մոտ:

Նա Ֆրիդոնի Փուրդոն եր բանացնում: Սաֆարը վոչ մի վարձ չեր ստանում: Նրա բաժինն եր՝ աղի հին շորերը ու ճաշի մնացորդը:

Մի որ Սաֆարի ընկերները նրան ժողով տարան: Սաֆարը զարմացել եր, վոր ընկերները ճառ ելին ասում, լավ-լավ բաներ ելին խոսում: Սաֆարի անունը գրեցին, վոր պրոֆմիության մեջ ընդունեն: Աղեն իմացել եր Սաֆարի ժողով գնալը: Նա շատ բարկացավ Սաֆարի վրա:

Մուս որը Ֆրիդոնին կանչեցին զյուղնորհը գրասենյակ:

Նախագահը պահանջեց, վոր Սաֆարի հետ պայման կնքի:

— Ի՞նչ պայման, ի՞նչ բան: Տաս տարի նրան պահել եմ, ի՞նչ պայման: Իսչքան ծախսել եմ, բավական ե: Մուֆթա խոմ չի աշխատել:

— Ի՞նչ ես ծախսել. մինչև հիմա նրան մի կոպեկ չես տվել. դու պարտավոր ես նրան վարձատրել: Մինչև հիմա վոչ մի վարձ նա չի ստացել: Հինգ տարուց ավել ե, վոր քո ֆուրգոնը նա յեքանացնում:

— Ախաբեր, չի ուզում, թող հեռանա տնիցս, տեսնենք կարսդ ե գլուխ պահել:

Բատրակումը Սաֆարի գործը տվեց գատարան: Ժողովրդական դատարանը վճռեց Ֆրիդոնից յերեք հարյուր ռուբլի գանձել հոգուտ Սաֆարի:

Մի ամսից հետո Սաֆարն անցել եր շրջգործկոմի ձիապանի պաշտոնին:

Զ Ճ Ջ Ք

Բայրակ, խուսափիր բանավոր պայմանից: Պայման կապիր գրավոր չեւիով: Պայմանը դուր բայրակիունին հասպարելու: Պրոֆօրիուրյունից դուրս չընաս:

ԲԱՐՁՐԱՅՆԵՆՔ ԳՅՈՒՂՈՒՄ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՆԽԱ-
ՏԱՆՔՆԵՐԸ: ԱՓԱՆԳԱԿԵՆՔ ԳՅՈՒՂԽՈՒՅՇՎԻԹԻ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ

ՆԱԽԼՆՏՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Մոտենում եր գյուղմողների ընտրությունը: Գյուղում մտածում ելին թեկնածուների մասին: Զքավորական խմբակը կամբջիջի հետ ժողով ունեցավ. ժողովում կազմեցին թեկնածուների ցուցակը:

— Ոհանյան կարո, կարմիր բանակում ծառայել ե, կոմմունայի անդամ ե. զպրոցի մասին մտածում ե:

Միաձայն անցնում ե:

Այդպիսով վեց տղամարդ և 3 կին մացրին ցուցակի մեջ:

— Նախագահի համար ամենահաջող թեկնածուն Առաքելյան,
Սուրենն ե. նա լավ գրագետ ե, չքավորներին միշտ պաշտպանել
ե: Իսքը կոմմունիստ. նա լավ նախագահ կլինի: Դալրոցի մասին
միշտ աշխատել ե: Այս տարի հաջողեցրեց բաց անել մեր գյուղում
մանկական հրապարակ:

Միաձայն ընտրվում ե:

ՀՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Յեկավ ընտրության որը: Գյուղի ակումբում հավաքվեցին 420
տղամարդ և 120-ի չափ կին:

Չքավորներն ու միջակները միացել եյին. կուլակներն ել միա-
ցել եյին, բայց շատ քիչ եյին: Ովքե՞ր եյին նրանք. նախկին քյոխ-
վան, տերտերի տղաները, մի քանի խղճուկ չարչիներ, հին հա-
րուստ — գյուղի նախկին տիր ու տիրական Գաբրիել աղան և մի
քանի ուրիշ հարուստներ: Դրանցից մի մասը ձայնագուրկ եր: Զը-
քավորներն ու միջակները միաձայն ձեռք բարձրացրին Կարոյի-
տված ցուցակին: Մյուս ցուցակին ձեռք բարձրացրին 17 տղա-
մարդ և մի կին: Հաստատվեց չքավորների ցուցակը: Կուլակները
սրտովը չեր այդ ընտրությունը:

ՈՐԸ ՈՐԻՆ — ՀԵՏԵՎԻՐ ՆՈՐԻՆ

Բատրակ, յերկիրը
դու կառավարիր
ու նոր կենցաղին
յեղիր հիմնադիր:
Մտիր գյուղիսորհուրդ
նրան գործակից,
անցրու կուլակին
ասեղի ծակից:
Մտիր կոռպերատիվ,
գործերդ վարի,
աշխատիր գյուղում
հա տարեցտարի:



ԿԱՐՄԻՐ-ԲԱՆԱԿԱՅԻՆ

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿ

— Ո՞վ ե պաշտպանում մեր լերկիրը:
— Կարմիր բանակը:
— Ո՞ւմ ե պաշտպանում Կարմիր բանակը:
— Աշխատավորներին:
Կարմիր բանակը կազմված ե բանվորներից և գյուղացիներից:
Մեր բանակն ուժեղ ե թե զենքերով և թե գիտությունով:
Նա պաշտպանում ե բանվորի և գյուղացու աշխատանքը:
Ցարի ժամանակ զինվորը վոչ մի իրավունք չուներ: Նա մի
մեքենա յեր կապիտալիստների ձեռքում: Այժմ կարմիր զինվորն
ազատ ե: Կարմիր զինվորը ոգտվում ե քաղաքացու բոլոր իրա-
վունքներից:

Կարմիր բանակայինն ազար ե: Նա պաշտ-
պանում է բանվորի յեվ գյուղացու աշխա-
տանքը: Կարմիր բանակը կազմված է բան-
վորներից յեվ գյուղացիներից:

I. ՆՅԻՐ ԿՅՈՒՆՔ ԵՆՔ ԿԱՐՄԱԽՈՒՄ

ԳՐԻ ՌԻԺԼ

Ա. Յ Բ Բ Ե Ն

Աա,	Բ բ,	Գ գ,	Դ դ,	Ե ե,	Զ զ,	Ը ը,
Իիա,	Բ բ,	Ղ ղ,	Դ դ,	Ե ե,	Զ զ,	Ը ը,
Թ թ,	Ժ ժ,	Ւ ւ,	Ծ ծ,	Ւ ւ,	Ծ ծ,	Կ կ,
Բ բ,	Ժ ժ,	Ւ ւ,	Ծ ծ,	Ւ ւ,	Ծ ծ,	Կ կ,
Հ հ,	Ձ ձ,	Ջ ջ,	Շ շ,	Շ շ,	Ն ն,	
Ի ի,	Ձ ձ,	Ջ ջ,	Շ շ,	Շ շ,	Ն ն,	
Շ շ,	Ռ ր,	Շ շ,	Ռ ր,	Ռ ր,	Ռ ր,	
Ե յ,	Ռ ր,	Շ շ,	Ռ ր,	Ռ ր,	Ռ ր,	
						Ո ո:
						Ռ ռ:

Թ Վ Ե Ր

- 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16,
17, 18, 19, 20, 30, 40, 50, 60, 70, 80, 90, 100.
I, II, III, IV, V, VI, VII, VIII, IX, X, XI, XII.

Անա գրում եմ քեզ, և գու կարդում ես իմ նամակը։ Գիրը
կապում ե մեզ իրար հետ։ Այդ ե նրա մեծ ուժը։

Ինչ վոր հազարավոր սերունդներ մինչև արել, սովորել,
տեսել են, — զրված են զրքերում։ Ցեզ քանի վոր գու գրագետ ես,
այդ բոլոր կարող եր իմանալ։ Բայց կես ճանապարհին կանգ չառ-
նես։ Ով կիսագրագետ ե, հա շուտ ե կարդալը մոռանում։ Պետք
է սովորել վարժ կարդալ։ Աղաւա ժամանակ միշտ կարդա, գրիր, վոր
լավ գրագետ դառնաս։

Ինչքան սիրուն և պիտանի բաներ կան զրքերում։ Ցեղ գեռ
ինչքան նոր գրքեր պիտի գրվեն։ Զե վոր մարդիկ միշտ առաջ են
գնում։

ՏԵս, ընկեր, յետ չմնաս։ Սովորիր, ժամանակ մի վասնիր։

Նոր սկսելիս և վերջակետից հետո պետք ե մե-
ծատառով գրել։

ԿԱՐԴԱԼԸ ՓՐԿԵՑ

Մի անգամ հիվանդանոց գնացի. ձեռքիս վերք կար։ Սաստիկ
ծարալ ելի։ Սեղանի վրա բաժակի նման մի բան եր զրված՝ ջրով
լիրը. «Խմես», մտածեցի յետ։ Վերցրի բաժակը և բերանս տարա-
Մեկ ել տեսնեմ՝ վրան գրած ե քույն։

Թե կարդալ չելի իմանա, բանս բուրդ եր, պիտի մեռնելի։

ԼՐԱՑՐՈՒ ԱՅՍ ՀԱՐՑԱԹԵՐԹԸ

ՀԱՐՑԱԹԵՐԹԸ

Աղջանուն
Անուն
Հայրանուն
Տարիք
Վայր միության անդամ՝

Աշխատանքի ստաժը
Սոցիալական գրությունը
Սոցիալական ծագումը
Կուսակցականությունը
Հասցեն

Ստորագրություն

« » 192 թ.

(բնակավայրը)

Չնայած իրա
Ճերմակող մազին՝
Քուրսու տակ մենակ
գեղջկուհի աղին՝

Չմռան գիշերը
Նստել ե արթուն,
ամռսնուց ծածուկ
գրում ե, կարդում:

Շատ դժվար հարց ե.—
հա մարդն ե փնչում,
լացկան մանկիկը
հանգիստ չի ննջում:

— Ինի՞ր, ա կնիկ,
հերիք ե կարդաս.
դու որ ծերության
տերտե՞ր պիտ դառնաս:

Խնդրելով մարդուն,
կաթ տալով վորդուն,
մեր գեղջուկ աղին
գրում ե, կարդում:



Յերեվան, ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՐԱՊԵՂԻՑԻԱԼ

Ղամարլի Պետապի աշխատակից
Ալմաստ Զամոյանից

Դ ի մ ու մ

Փոխադրելով մեկ ոռորի, խնդրում եմ ուղարկել «Մաճկալ»-ի
համարները 1929 թ. առաջին կիսամյակի ընթացքում (հունվար—
հունիս):

Ա. Զամոյան

Հասցես.—Ղամարլու, Պետապ.
1928 թ. 20-ին դեկտեմբերի

Անուններն ու ազգանուններն սկսվում են մեծատառով. որինակ՝
Անդրակ Թեփրոսյան, Հովհաննես Վար-
դանյան, Վրբանես Միրայյան:

Գյուղերի, քաղաքների, գետերի և սարերի անուններն սկս-
վում են մեծատառով. որինակ՝

1. Քանաքեռ, Բյուրական, Փարսի:
2. Շերեման, Ֆենինական, Մդեկիանայան
3. Միրախ, Միրիազյա, Զանգու:
4. Միրարայ, Միրազած:

ՄԱՆԻՇԸԼ

Մանիշը թոնրի առջև չոքած՝ հաց եր թխում: Կեսուրն ել
ամռում եր:

— Մանիշ,—կանչելով ներս մտավ Աշխենը, —քեզ գյուղիսոր-
հըրդի անդամ ընտրեցին...

— Եղ եր պակաս, —բղավեց Մանիշի կեսուրը: —Ել վոչ ամոթ
ե մնացել, վոչ աբուռ:

— Ե՞ն, դուք՝ պառավերդ եղածս ապրել եք, եղածս ել պի-
տի մեռնեք: Մեզ ջահեներիս համար նոր ե ծագել կյանքը: Ե՞ն,
չես զնացի, Մանիշ ջան, ուշը մի՛ դարձնի, —ասաց Աշխենն
դուրս գնաց:

— Ի՞նչ ուզում են՝ ասեն, յես խորհրդի մեջ կաշխատեմ ու ցուց կտամ, վոր կինը ել կարող ե աշխատել, — մտածում եր Սանիշն իրեն։

Ներս մտավ Մանիշի մարդը՝ Փիլոն։

Պառավը վորդուն տեսնելուն պես վրա վաղեց և ձնկներին խփելով՝ բղավեց։

— Տներս քանդվեց, բալա ջան. հերիք չե, վոր Մանիշը կանաց ժողով ե գնում, հիմի յել ուզում ե տողամարդկանց հետ ընկնել։

Հա, ախչի, — աչքերը չոելով զոռաց Փիլոն, — են անհամուս Աշխենը ճիշտ վոր քեզ ճամպից հանել ե։ Մեկ ել վոր նրան եստեղ տեսա. քեզ կսպանեմ. լսում ես, թե չե։

Յեվ Փիլոն բռունցքը բարձրացրեց, վոր խփի։ Մանիշը ճշաց։

— Սխալ եք, Աշխենը վոչ մի մեղք չունի։ Ինձ գյուղն ընտրել ե, և յես պարտավոր եմ աշխատել։ Անցել են այն ժամանակները, յերբ կնոջ կարելի յեր վիրավորել ու ծեծել։ Խելքդ գլուխդ ժողովիր, աչքերդ բաց արա և տես նոր կրանքի պայծառ շողերը։ Փիլոն բռունցքը և ջեցրեց և լուս դուրս յեկավ սենյակից։

ԱՍՏՎԱԾ ՓԱԽԱՎ. — ՄԵՆՔ ԵԼ ՓԱԽՉԵՆՔ



Չարչի Սաքոն,
Տերտեր Առկոն
Նստած են հին
Ժամի բակին,
մեջքները պինդ
աված պատին՝
Վոնց են թթվել,
Նոթեր կիտել.
Կարծես աշխարհ
փուլ ե յեկել։
Իսկ քիչ հեռու
նեղ փողոցով
Խիտ շարքերով,
Դրոշներով
պիոներներ,
Կոմսոմոլներ
ու բատրակներ

անց են կենում,
Կոմսոմոլի
տոնն են տոնում։
Քայլում են հաղթ,
յերգում թափով։

II

Եղ վոր լսեց,
Սաքոն պալթեց.
— Սիրտս ճաքեց,
ով տեր աստված,
դե պատժիր ե՛,
Կրակ թափիր։
— Ալս, վոր մեկին,
այ Սաքոն ջան,
պիոներին,
Կոմսոմոլին,
կոմմունալին,
գլուղիսորհերին,

թե Փոկերին...
— Սաղ անվարտիկը,
սաղ տկլորներ,
սաղ բատրակներ,
մեր գլխին տեր։
Ժամ չեն զալիս,
պաս չեն պահում,
մեղ թքում են
ու հայնոյում։
Իսկ քիչ հեռու
խիտ շարքերով
անց են կենում,
կոմսոմոլի
տոնն են տոնում։
— Ալս հին աշխարհը կը-
քանդենք,
մեր նոր աշխարհը կը-
նենք։

ԲԱՌԵՐԻ ԲՈՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Հաղթ—ուժեղ, հաղթական.
Փոկ—Փոխադարձ Ոգնության Կոմիտե։

ՈՒՍՏԱ. ՊԶՈՒԿՐ Ա.

Ուստա Պզուկի քեֆին քեֆ չեր հասնի. փողն իրեն-իրեն եր գալիս. կերածն ել միշտ՝ մեղք ու կարագ, տոլմա ու քուֆթա։ Խանութը քաղաքի բանուկ փողոցի վրա, ինքը մկրատը ձեռին ձեռում եր, չորս-չորս աշկերտներն ել նստած կարուժ եյին, հակարում։

Բ.

Ժամանակն անցավ...
Աշխարհը փոխվեց...
Թեև մեղըն ու կարագը, տոլման ու քուֆթան անպակառ ելին Պզուկի սեղանից, բայց ել «աղա» կանչող չկար, — «ընկեր» եյին ասում։

Բայց ահա մի որ աշխատանքի տեսուչը խանութ մտավ։
— Վարպետ, քանի աշկերտ ունեք։
— Չորս։

— Ամսական ի՞նչ եք տալիս:
 — Ամ... սա... կան,—կմկմաց Պղուկը, ու լեզուն կապ ընկավ:
 — Ի՞նչ ամսական, ի՞նչ բան,—ձայն տվեց աշկերտներից
 մեկը,—ես չորս տարի յե ծրի ծառայում ենք:
 — Վարպետ, ես աշկերտներին ամսական յերեսուն ոռոքի
 փող պիտի տաս: Բացի այդ, կզնաս ապահովագրական գանձարկղը
 և կապահովագրես: Հակառակ դեպքում խանութը կփակենք:
 Ասաց ու գնաց:
 Վարպետ Պղուկը կարծես կայծակնար յեղավ, ձայն չհա-
 նեց:
 — Ուստա Պղուկ, քեզդ վհնց ա, — ասացին աշկերտներն ու
 մի կուշտ ծիծաղեցին:

ՍՏԱՑԱԿԱՆ

1928 թ. 30-ին հոկտեմբերի: Արայա Կառու-
 յողների Միության Վարչությունից ի՞ն ար-
 դրաժամա աշխատանքի վարչադրությունը —
 մեկ ոռոքի 13 կոպ. (6 ո. 13 կ.):

Սարդիս Գալոյան

Սպանդարյան փողոց № 37

ՆՈՐ ԳՅՈՒՂԲ

Կարմիր գյուղի մեջտեղում	Նազլու բաջին ե նստում
Նոր դպրոցն ե փառավոր,	ցածրիկ շենքում մոտակա.
ուր մանուկները խաղում,	Նոր են ընտրել խորհրդում
սովորում են ամեն որ:	գլուղխորհրդի նախագահ:
Կոռալերատիվ ե դարձել	Թեև շատ բան կա թերի,
մեծ խանութը Մարգարի,	հինը գեռ շուտ չի կորչի,
ուր գնում են ջահիլ, ծեր,	բայց փոխվել ե կյանք, կենցաղ,
նավթի, աղի, շաքարի:	ել են նախկին գյուղը չի:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Թերի — կիսատ.
Կենցաղ — նիստ ու կաց:



Մեջ Պետք են ԱՌՈՂՋ Յերենաներ
 Յեթե յերեխս սն խոսել կարողանար, նա կասեր.
 — Մի համբուրեք իմ բերանը:
 — Յերեսիս մի հազար, դրանից կհիվանդանամ:
 — Կարմրուկից, կապույտ հազից, քութեշից և բկացավից
 հեռու պահեք ինձ, կարող եմ վարակվել և մեռնել:
 — Գրկում յերկար մի պահեք. թող հանգիստ պառկեմ իմ
 անկողնում:
 — Բերանս ծծակ չդնեք. մի թողեք մատներս ծծեմ:
 — Հյուր սի տանեք ինձ, վոչ ել կինո կամ թատրոն. կհոգ-
 նեմ և վատ կընեմ:
 — Մի պատժեք և մի ծեծեք ինձ:
 — Խաշխաշ, գինի, սուրճ, թե, ինձ մի տաք. — Փսաս ե:
 — Յես ուզում եմ առողջ լինել:

Արտագրիր «յ»-ով սկսած բառերը:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Ծծակ — ամպուկ, սոսկա:
Սուրճ — կոֆե:

Խոշոր տառերով արտագրիր ամեն մի լողունկ
մի թղթի վրա և փակցրու պատերին:

Չենքերդ, յերեսդ յել մարմինդ միջր մա-
յուր պահիր:

Ապրախեղեններդ շուր-շուր փորիր.

Բնակարանունդ միջր մայուր ոդ յել
արել բող լինի:

Չուրը, ոդը յել արելիր մեր բարեկամ-
ներն են:

Ուր արել եւ մինում, բժիշկ չի մինի:

Մի ծիփր:

Մի հարբիր:

ԿՈԼԵԿՏԻՎ ՀՈՒԶԸ

Կոլեկտիվը իր արտերը հնձում եր: Հասկերը հեալով փովում
ելին:

Կոլեկտիվի նախագահ Ալեքսանը հագել եր իր հին բանվորա-
կան բրուզը: Յեռանդով ցած եր փոռում հասկերը: Կոլեկտիվի ան-
դամներն աշխուժով հնձում ելին:

Յերեխաներն ոգնում ելին նրանց: Հայրերը նախում ելին յե-
րեխաներին և ուրախանում:

— Ա. զրեք, յերեխեք: Ես ձեր հացն ե: Հողից վոսկի յենք հըն-
ձում: Մեծ ու փառ իրար ոգնենք:

Սատիկ կաւերից գալիս ելին կոլեկտիվի աշխատանքներին
նայելու:

— Ոհան, —ասաց Պողոսն իր հարևանին, —տեսնում ես՝ կոլեկ-
տիվն ինչ մեծ ուժ է:

— Հա, Պողոս ախպեր, —պատասխանեց Ոհանը. —մի ձեռքը ծափ
չի տա: Արի մենք ել մտնենք կոլեկտիվի մեջ:

— Մտնենք, մտնենք, —ձայնակցեցին մուս գյուղացիները:
Կուլակ Պավուշը նոթերը կիտած նայում եր: Շրթունքները
կրծելով նա մտածում եր. «Վայն եկել ե ինձ տարել»:

ԲԱՐԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Աշխուժով — ժիր, յեռանդով.
Չայնակցեցին — ձայն տվին:

ՎԱԴԱՐՃԱՊԱՏԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՀՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԴԻՄՈՒՄ

Մենք, Վաղարշապատի «Անաստված» կոլեկտիվի անդամներս
խնդրում ենք 500 ռուբլու վարկ տալ մեզ՝ սերմացու և լծկան
գնելու համար:

Պարտավորվում ենք հանգցնել մեր պարտքը նոր բերքին՝ 6
ամիս հետո (մինչև սեպտեմբերի 1-ը):

ԱՆԱՍՎԱՐԾ ԿՈԼԼԵԿՏԻՎ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՅՆ
ՔԱՐՏՈՒԳԱՐԱ

1929 թ. մարտի 1-ին
Վաղարշապատ (Եղմ. գավառ):

ԴԱԼԱՐՑ ԳՐԻԳՈՐՅ

1.

Հայրս հիվանդ եր:

Խեղճ մայրիկս գլուխը կորցրել եր:

— Զուր, —առանց աչքերը բաց անելու հառաջում եր հայրս:

— Խաչիկ, —ձայն տվեց մայրս, —զնա դալլաք Գրիգորին բեր:

— Մայրիկ դալլաքներն սպանում են մարդկանց: Գնամ բժիշկ

Յեղիշին բերեմ:

— Զե, չե, ասում են՝ բժիշկները դիտմամբ դեղ են տալիս
 հիվանդին սպանում, վոր ուրիշները չփառակվեն:
 — Բժիշկն արդպիսի բան չի անի, մայրէկ:
 — Շատ մի խոսի, գնա կանչի:
 Ճար շկար: Գնացի դալաքին բերի:
 Դալաքը տնտղեց հորս և ասաց, վոր մըսել ե:
 Պահանջեց տաշտ, հայրիկիս շապիկը հանեց, պառկեցրեց և
 ածելիով մի քանի տեղից մեջքը ծակեց:
 Արյունն սկսեց հոսել տաշտի սեջ:
 Հայրիկս սկսեց հառաչել ու քիչ հետո նվազեց ու թուլացած
 ընկավ:
 — Հիմի պետք ե արյունը կանգնեցնել. տաք ջուր բերեք, աղ
 բերեք, սարդի փոստախն բերեք, սկսեց գոռզոռալ դալաքը.
 Մայրս դես ու դեն եր վազում:
 Տամնելով, վոր հայրիկս արնաքամ ե լինում, վազեցի բժշկի
 յետելից:
 — Բակեր Մկրտչյան, դալաքը հայրիկիս մեջքը ծակել ե,
 արյունը չի կանգնում, խնդրեմ գաս, հայրիկիս ազատես, — ասացի
 իսու:
 Բժիշկն իսկույն վեր թռալ տեղից, վերցրեց անհրաժեշտ դե-
 ղերն ու առաջ լնկավ:
 Հենց վոր դալաքը պատուհանից տեսավ՝ բժիշկը դալիս ե,
 ամեն ինչ թողեց ու փախավ:
 — Ես ո՞վ ե դալաքին կանչել, — գոռաց բժիշկը տուն մտնելով:
 — Յա եմ կանչել, բժիշկ ջան, անգետ մարդ ենք, — պատաս-
 խանեց մալրս:
 — Դալաքին ել դատի կտամ, քեզ ել:
 Բժիշկն արյունը կանգնեցրեց: Հայրիկս յերկու շաբաթից վորի
 կանգնեց:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Նվազեց - թուլաց սվ.
 Հառաչել տքալ, ախ բաշել.
 Մարդի փոստախն - սալանդող:

II. ԲԱՐՁՐԱՑՆԵՆՔ ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱՐԻՑՈՒԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

ՏՐԱԿՏՈՐԻ ՅԵՐԳԸ

Հեյ ջան ախպեր, պողպատ ախպեր,
 դե շուտ արի, գալդ բարի,
 տրակտոր ջան, մեր նոր ընկեր,
 քեզ փեշքեց ե հանդը գյուղի:

Մեր սրտի հույս, մեր աչքի լույս,
 բեր ճակատդ կարմիր կապենք,
 ման յեկ գյուղում, յերթդ անուշ,
 գութան ու չութ թող գարդոտվեն:

Դու վոր մերն ես, ել ի՞նչ կուլակ,
 ել ի՞նչ զորքա մեզ կնեղի.
 սարքը վըա տասը գութան
 վոչինչ բան են քո առաջին:

Դու վոր յեկար, մեր նոր ճամպան
 շատ հեշտացավ, ել դարդ չունենք:
 Դե, քեզ ցույց տուր, տրակտոր ջան,
 հինը քանդենք, նորը շինենք:


ԿՈՎԻ ԽՆԱՄՔԸ

I

Մեր գյուղացին իր կովը կերակրում ե գլխավորապես խոտով,
 դարձանով, իսկ ալյուր, թեփ, ըռւսապ քիչ ե տալիս: Խոտը շատ
 անգամ գետին ե թափվում. կովը կերի մի մասը կոխկրտում եւ
 կովերը կապում են մութ գոմերում, նեխված ողի մեջ:

Ուրիշ յերկրներում, որինակ՝ Հոլլանդիայում, Շվեյցարիայում
 կառուցում են լնդարձակ, լուսավոր գոմեր: Գոմերը պահում են
 շատ մաքուր: Կովերին կերակրում են վոչ թե միայն չոր խոտով
 ու դարմանով, այլ տալիս են նաև քուսպ, թեփ, ճակընդեղ...
 Կթելու ձեի ե ժամանակի վրա շատ մեծ ուշադրություն են դարձը-
 նում: Դրա համար ել այստեղի կովերը լավ են լինում, շատ կաթ
 տալիս, տերերը շատ ոգուտ են ստանում:

Վորակեսզի մեր կովերը մեղ շատ ոգուտ տան, մենք ել պետք
ե կովերին լավ խնամենք. որինակ՝
Գոմերը պետք ե լինեն լուսավոր.
Գոմերի պատերը պետք ե լինեն սվաղած.
Գոմի հատակը պետք ե լինի հարթ.
Գոմը պետք ե լինի վոչ ցուրտ, վոչ ել շատ տաք.
Պետք ե կովերին կերակրել և կթել չափով և ժամանակին.
Յերբեք փչացած խոս, դարման և այլն չպետք ե տալ:



Բացի խոտից ու դարմանից կովերին պետք ե տալ նաև ա-
յուր, թեփ, քուսպ, ճակրնդեղ և այլն:

ԲՈՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Հարթ—դուզ:

Հարցրեք ձեր զյուղատնտեսին՝ ինչով, ինչ չափով և ինչ-
պես կերակրել կովերին:

ԲԱՄԲՈՒԿ

Հայաստանը բամբակի բերքի լավ շոշաններ ունի՝ Դամարլու,
Հրազդան, Ղուրգուզովի, Զանգիբասասը և Սարդարաբադ:

Բամբակից պատրաստում են թել և կտորեղեն:

Լենինականում մենք ունենք անկվածարան: Այդ անկվածարա-
նին պետք ե շատ բամբակ տանք, վոր ստանանք չիթ, բյազ և
այլն:

Խորհրդացին Ռուսաստանում ել անկվածարաններ շատ կան:
Յեթե բամբակի մի մասը Խորհրդային Ռուսաստանին տանք, այն-
տեղից ավելի շատ մեքենաներ, հագուստեղեն և նաց կտանանք:

Յեթե բամբակի կուլտուրան զարգացնենք, մենք շատ բանի
նեղություն չենք քաշի:

Բամբակը Խ. Հայաստանի հարստության աղբյուրն ե:

Ահա թե ինչու Հայաստանի Բամբակագործության կոմիտեն
աշխատում ե բամբակի ցանքսերը շատացնել:

ԲՈՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Անկվածարան—մանածագործարան, կտորեղեն պատրաստելու
գործարան.

Բույսի կուլտուրա—բույսի մշակություն:

ԱՐՏԻ ՅԵՐԳԸ

Ծըլել ե արտս,
ծըփում ե արտս,
կորել ե դարդս, ջան:

Խնդում զվարթ ե,
նոր բացված վարդ ե,
արտս աղատ ե, ջան:

Յեկել ե ջուրը
խնդության որը,
գյուղալ տրակտորը, ջան:

Ծըլել ե արտս,
ծփում ե արտս,
կորել ե դարդս, ջան:

ՍԵՐՄՆԱՑԱՆ ՄԵՔԵՆԱ

Յանել կարելի յե ձեռքով կամ մեքենայով: Ձեռքով հավասար
ցանելը դժվար ե: Մեքենայով ցանքսն ավելի արագ ե կատարվում:
մինչդեռ ձեռքով մի որում 3 հեկտար հազիվ ե ցանվում, մեքենայով
կարելի յե ցանել մինչև 5 հեկտար:

Մեքենայով ցանքսը լինում ե շարքերով, և սերմ ել քիչ ե
գնում հեկտարին 118 կիլո. այնինչ ձեռքով ցանելիս հեկտարին
գնում ե 192 կիլո:

Մեքենայով ցանքսը սերմերն արտում հավասար խորության

Են ոնկնում և ծլում են սիաժամանակ ու մի բարձրության։ Զեռքով ցանելիս սերմերի մի մասը խորն ե թաղփում կամ յերեսն ե մնում ու չի ծլում։

Սերմացան մեքենայով ցանքը լավ ե դուրս գալիս, սերմը սերմին չի խեղդում, բոլոր սերմերն ել ազատ աճելու տեղունեն։

Մեկի ուժը չի պատի սերմացան մեքենա գնելու, բայց վոր միասին գնեն, ամեն մեկին քիչ ծախս կնսաի։

Արտագրիր։—

Գյուղացնորեսական մեթենաներ
Գուշան, դրահան, շարժացան, սերպաց,
խորհար, կալսոդ մեթենա։

ԱՇԽԱՏԱՆՔՈՎ—ՎՈԶ ԱՂՈԹՔՈՎ

Ինչի՞ցն ե, դրկից, —

արտղ իսիս կից,

զուրկ ե լավ բերքից։

Ասեմ. «Յո խելքից»։

Զգտած—սերմդ,

տերտերից որհնած,

ցանեցիր հողում

հոգնած բեզարած։

Արտս կանաչեց

ու դարձավ մեծ ծով,

իմ աշխատանքով—

և վոչ աղոթքով։

ԲԱՐԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Սեղ—վայրի, բարակ խոտ։

ԱՐՏԵԼԻ

Հայզուղկոսպի հրահանգիչը մեր գլուղում զեկուցեց արտելների մասին։ Ասաց, վոր մեր գլուղացիք կովերին վատ են պահում։

Ստեփանավանի շրջանում մի կովից ստանում են տարեկան 100—120 ռուբ. ու գուտ։

Այդ նրանից ե, վոր այստեղ արտել են կազմակերպել և կովերին լավ են խնամում։ Կաթից մեքենայով ստանում են լավ տեսակի յուզ, պանիր։

Արտելի սեջ մտել են բոլոր գլուղացիները։

Գյուղացին մենակ չի կարող մեքենա գնել, մասնագետ հրավիրել, ինչ միասին կարող են։

Գլուղացիք ասացին։

— Վոր այդպես լավ ե, յեկեք մենք ել արտել հիմնենք։

Քվեարկեցին։ Անցավ միաձայն, հրահանգիչը կարդաց կաթնամնտեսական արտելի կանոնադրությունը։

Քրվեցին 40 գյուղացի։ Վարչություն ընտրեցին, անցան գործի։

Այժմ մեր շրջանում չողժողկոմատը պանրի գործարան ե շինում։ Շատ գլուղերում կազմակերպել են արտելներ և նոր նոր անցել գործի։

ՀԵԽԱԳՐԻ ՈՐԻՆԱԿ

Վ ա ղ ա ր շ ա պ ա տ հ ո ղ բ ա ժ ի ն

Հայտնեցեք հողաբաժանման ժամանակը

Բաղալյան

Ոշական Սարգիս Բաղալյան

ԿՈՈՊԵՐԱՏԻՎԸ ԲԱՑՎԵՑ ՍԵՐԳՈՅԻ ԽԱՆՈՒԹԸ ՓԱԿՎԵՑ

Յերեք ամիս ե, ինչ նորաշեն գլուղում բացվել եր կոռպերատիվ խանութ։

Գյուղացիներն ել հանգիստ չունեցին. հենց վոր մի բան պահասում եր, վաղ երին տալիս կոռպերատիվ։

— Ինձ մի կիլո շաքար կշորի…

Հ Ա Շ Ի Վ

Սարգիս Մնացականյանից

«Արարատ» տրեստին

Տարի, ամիս, թիվ	Վաճառված ե	Քանակ	Արժեք		Գումար	
			Բ.	Կ.	Բ.	Ը.
1928 թ. Հոկտ. 10.	Խաղող սպիտակ » սեղ	1½ տոնն 1 տոնն —	120 100 —	— — 100	180 — —	—
					280	—

Յերկու հարյուր տիսուն ռուբլի-ստացա՝ Սարգիս Մնացականյան:

ՅԵՂԱՅՐՆԵՐ

Յեղայրներ ենք մենք են գլխից
յես՝ բանվոր, դու՝ գյուղացի,
մեր սերտ, ամուր միությունից
հին աշխարհը կսարսի:

Յես կոփում եմ յերկաթ, պողպատ,
տալիս քեզ խրփ, գերանդի,
դու մշակում ալգի ու դաշտ,
տալիս հացը քո հանդի:

Յեղայրներ ենք մենք են գլխից
յես՝ բանվոր, դու՝ գյուղացի,
մեր կուռ, ջոտ բազուկներից
կապիտալը կսարսի:

- Ալեքսան ախալեր, մի տուփ լուցկի տուր:
- Ա՞զ...
- Աղը հատել ե.
- Յ մետր բյազ...
- Աւ ախալես ամեն որ...

Կոռպերատիվի առևտուրը քանի գնում ծավալվում եր...
Կոռպերատիվից քիչ հեռու գտնվում եր Սերգոյի փոքրիկ խանութը: Կոռպերատիվի բացվելու որից նրա առևտուրը պակասել եր: Որերով նրա խանութը մի գյուղացի անգամ ներս չեր մտնում: Ո՞վ եր գժվել՝ Սերգոյի վատ ապրանքը թանգ գնով առնի:

— Չեղա՛վ, — ինքն իրեն գլուխը թափ տալիս ու փնթփնթում եր Սերգոն: — Թե ապրանքս եժանացնեմ, են ժամանակ մնաս կանեմ: Լավ ե վերջ տամ խանութիս:

Գրեցէք ձեր կոռպերատիվում յեղած ապրանքների անունները՝ որինակ՝

թեյ, նայիք, սապոն, չիթ, մեխ...

Կոռպերատիվի անդամին

1. Կոռպերատիվ միքիր սիրով, վոչ թե թենակ, այլ ընկերով:

2. Կոռպերատրիսից գնիր ամեն բան, իսկ մասնավորից՝ վոչ մի բան:

3. Հարուսագներին վարչությունից հանիր, վոր կոռպերատրիսը լավ բանի:

4. Ժողովներին միշտ գնա, վոր գործը յեց շնառ:

ԳՅՈՒԻՉ ՈՒ ՔԱՂԱՔ

Քաղաքի հետ
կապենք գյուղը.
բանվորին տանք
հացն ու յուղը,

պտուղները
մեր բաղերեն,
ամեն տեսակ
հում նյութեղեն,

վոր նա մեզ տա
գերք ու դրիչ,
գութաններին
խոփ ու ձևիչ:

թել ու ասեղ,
մկրատ ու ճղթ,
սապոն, շաքար
և թեյի խոտ,

դեղ ու դարժան
հիվանդներին:
Յեկեք ոգնենք
բանվորներին,

նրանց համար
դրկենք ապրուստ,
տեղն ստանանք
գիրք ու հագուստ:

ՍՈՒԼԻՉՆԵՐԸ

Կար ժամանակ, յերբ մենք աղքատ արհեստանոցներում եյինք
աշխատում և աշխատանքն ել սկսում եյինք առավոտները՝ զա-
նազան ժամանակ:

Խսկ ալժմ ուրիշ եւ: Առավոտյան ճիշտ ժամը 7-ին ամբողջ սի-
լիոնի համար և սուլիչը ճշում:

Աշխատանքն ամեն տեղ սկսվում ե միևնույն ժամին:

Միլիոնավոր մուրճեր միատեղ և միևնույն վայրկանին են
բարձրանում:

Մեր առաջին հարվածը միատեղ և թնդում:

Բայց ինչ են յերգում սուլիչներն առավոտյան: Նրանք յեր-
գում են յերգը Միության:

Մենք դարբիններ ենք, ազատ յերկրում այս
մենք լավ որեր ենք ըստեղծում:
Զե՞ վոր իգուր չենք սպառում մեր ո ժը,
իգուր չենք մենք մուրճով զարկում.
զարկում, զարկում...

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Արի - բայ.
Սպառում - ծախսում:

ԼԵՆԻՆԻ ԱՆՎԱՆ ԶՐԱՆՑՔԸ

Գնում ենք տեսնելու «Լենինի» ջրանցքը, Ծիծաղով ու կատա-
կով հասնում ենք ջրանցքի բերանը:

Խայտալով դուրս ե յենում ջուրն իր հարազատ մոր գրկեց
և առաջ ե հոսում իր նոր հունով:

Ամբողջ յերեք կիլոմետր ջրանցքն անցնում ե մայր գետին
գուգահեռ: Նրա առջև ցցված բարձունքն աշխատել ե խափանել
նրա ընթացքը: Բայց աշխատավորի ձեռքը փորել ե նրա կող ու
կուշը և ճանապարհ բացել իր սիրելի ջրանցքի համար:

Ջրանցքն իջնում ե դեպի ցած և դուրս ե գալիս ազատ ողի
մեջ: Նա հոսում ե 85 մետր խորոթյան հունով և այդպես ամբողջ

6^{1/2} կիլոմետր:

Հունն այստեղ շինված ե քար ու կրով:

Ջրանցքը դուրս ե գալիս Եջմիածին և աշխատավորությանը նոր
կյանք ե ավետում: Նա խոստանում ե կենդանացնել նրանց այրված
ու խանձված գաշտերը և վոռոգել 2500 հեկտար հող: Նա զարկ
կտա բամբակի ու խաղողի մշակության:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Կատակ - հանաք.

Խայտալ - խաղալ.

Հուն - գետի տաշտը (արիւ).

Ավետիք - ուրախ լուր.

Վոռոգել - ջրել:

ԴԱՐԲԻՆՆԵՐ

Մենք դարբիններ ենք, հոգով արի յենք,
դարբնում ենք վաղվա բանալին.
յելիր թափով դու, զարկիր դու, մնուրճ իմ,
պողպատկրծին ամուր զարկիր.
զարկիր, զարկիր:

ՄԵՐ ՀԱՆԴՈՒՄ

Տեսէք, մեր հանդում
ինչպես յեռանդով
սև հողն են քանդում
բանգորներ անթիվ:

Վաղուց պապակած
արտերն անբերի
ջուր են յերազում
տարիներ անթիվ:

Հեռու տեղերից
գալիս եր, անցնում
Արազը վարար
վորպես մի յերազ.

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Անբերի—բերքից զուրկ.

Տապ—ուժեղ շող.

Կենարար—կյանք տվող:

ԲԱԼԱԽԱՆԻ

Կասպից ծփան ծովի ափին
մեծ անտառ կա սև ու մթին
եղ անտառում
հոտ չեն բուրում
վառ ծաղիկներ
հազարագույն,
վոչ ել փոված գալարուն սեզ
քո վուքի տակ դու կտեսնես.
Ու ծառերն ել են անտառի
տերեներով չեն զարդարվի:
Եղ անտառում նավթահանքի
հոտն ե բուրում կապուտ նավթի,
և գալարուն կանաչի տեղ
մազութն ե սև փովել աճնտեղ:

Իսկ Ժառերը՝ սև, լիլիարի,
լիլիաներն են եղ անգատի:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Սեզ—բարակ կանաչ.
Գալարուն—փափուկ, ճկուն.
Բուրել—լավ հոտ տալ:

ՏԵՔՍՏԻԼ ՖԱԲՐԻԿՈՒՄ

Տեքստիլ ֆաբրիկում մինչև իրիկուն
բանում ենք մեկտեղ յես ու նա,
քրտնում ենք մեկտեղ, շարժվում որնիբուն
վորպես նոր, աշխուժ մեքենա:

Անցնում ե որը խինդ ու ծիծաղով,
որը արևոտ ու ժպտուն.
մեքենայի մոտ ուրախ, ծիծաղկոտ
նրա աչքերն են վառ ժպտում:

Սիրում եմ նրան վորպես սրատակից,
այդպես ե սիրում նա յել ինձ.
մենք իրար ընկեր, մենք իրար մոտիկ—
աշխատանքի բանակից:

Տեքստիլ ֆաբրիկում մինչև իրիկուն
բանում ենք մեկտեղ յես ու նա.
քրտնում ենք մեկտեղ, շարժվում որնիբուն—
վորպես նոր, աշխուժ մեքենա:

Հ Ա Ս Ե Ն Ե Ր

1. Հասարակ նամակի

Լեվոն Գարբինյանին

Մար-
կար
տեղ

Մյասնիկյանի անվան փողոց № 10

Վաղարշապատ.

2. Պատվիրած նամակի

Պատվիրած

Հայկ Մեսրոպյանին

Մար-
կար
տեղ

Լենինի փողոց № 65

Լենինական

Կարապես Մարտիրոսյանից, Յերևան, Սրովյանի № 16

ԵԼԵԿՏՐԻԹԻԿԱՅԻՑԻԱ

Մեծ քաղաքներում ելեկտրական ուժը գործադրում են գործարանի մեքենաները շարժելու, լուսավորության, տրամվայի, հեռագրի, հեռախոսի, կինոյի և ռադիոյի համար:

Ելեկտրական ուժ ստանալու համար անհրաժեշտ է գնել դինամո-մեքենա:

Այնուհետև գլխավոր ծախսը վառելիքն է, վոր հարկավոր և դինամո շարժելու համար:

Մեծ ելեկտրական կայաններ շինում են այնպիսի տեղերում, ուր վառելիքն եժան է: Այդ կայաններից լարերի միջոցով ելեկտրական հոսանքն անցնում է հարյուրավոր վերստեր:

Մարդիկ քամին և հոսող ջրերն ոգտագործում են աղորիքների համար: Քամին և ջուրը պտտացնում են աղորիքների անիվները:

Կարելի յե գետակի մոտ մեքենա դնել աղորիքի անիվի նման, և նա անդադար կաշխատի: Ամենափոքր գետակն անգամ կարող է ելեկտրական ուժ տալ ամբողջ գյուղին: Վառելիքի ծախս չի լինի, և ելեկտրական լուսալը կվառվի ամեն մի խրճիթում, ամեն մի արհեստանոցում: Ելեկտրական ուժը կարելի յե ոգտագործել ուրիշ շատ կարիքների համար:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑՈՒՏՈՒԹՅՈՒՆ

Աղորիք – ջրաղաց, հողմաղաց, ելեկտրաղաց.

Լար – յերկաթե թել (մալթուլ).

Տրամվայ – ելեկտրաքարշ:

ՀՈՂԸ

Հողը բաղկացած է յերեք գլխավոր մասից՝ 1) կավից, 2) ավաղից և 3) կենդանիների և բույսերի փտած մասերից: Այդ փրավածքը հողին սև գույն ե տալիս: Վորքան դրանից շատ լինի, այնքան հողը բերրի յե: Յեթե հողի 100 մասից 75—90-ը ավազ է, այդպիսի հողը կոչվում ե ավաղահող:

Կավացին հողի մեջ կա 50—70 մաս կավ, իսկ 25—30 մաս ավազ:

Սկահողի 100 մասից 15-ը փրավածքն է, իսկ միացած 85 մասը կավ ու ավազ են:

Կերչապես կա կրակին հող, վորի 20 մասը կիր է:

Ա.ՎԱԶԱՀՈՂ

Ավազահողի բերքը պակաս ե լինում: Նրա մեջ ջուրը լավ չէ պահպում: բույսերը յերաշտից չորանում ու այրվում են:

Ավազահողը կարտոֆիլի լավ բերք ե տալիս, յեթե պարագացրած ե աղբով:

Ա.ՎԱԶԱՀՈՂ

Կավահողը դժվար է վարել:

Յերաշտ ժամանակ քարի նման պինդ է լինում, իսկ անձրևորերին խօսրի պես փափուկ է դառնում: Նրանց մշակման համար պետք է լավ գութան և ծանր փողիս ունենալ: Կավախառն հողը հարմար է հաճարի, ցորենի, վարսակի, առվուկտի, վուշի և մի քանի այլ բույսերի համար:

Ա.ՎԱԶԱՀՈՂ

Կավախառն և սև հողերը պետք է այնպես վարել վոր կոշտ փայլ ցցելիս չփոշիանա, այլ փշրվի: Այդ գեպքում լավ բերք կինի: Իսկ յեթե հողը գութանով և տափանով շատ մանրացնենք, չորացին յեղանակին շատակիլ կրաշտանա, առաջին անձրեց պինդ կեղեւ կավի: Ցանքաը կխեղդվի և բերքն ել պկաս կինի:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑՈՒՏՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԱՉՄ – ՀՈՐՊՈՒԹՅՈՒՆ.

ՊԱՐԱՐՄԱԳՆԵԼ – ԱՂԲԵԼ.

ՎՈՒՀ – ԼՄՏԱՎԱՏ.

ՎԱՐՍԱԿ – ՀԱՎԴԱՐ.

Ա.ՎՈՒԿԱ – ՅՈՒՆՉԱ:



III. ԱՄԲԱՑՆԵՆՔ ԽՈՐՀԻԹԱՅԻՆ ՄԻԱԽԹՅՈՒՆԻ ՅԵՎ ԽՈՐՀՈՒԹԻՆԵՐԻ ԻՇԽԱՆՈԽԹՅՈՒՆԻ

I

ՎԼԱԴԻՄԻՐ ԻԼՅԻՉ ԼԵՆԻՆ

